

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	8
3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման	8
3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման	11
3.3. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման	14
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	15
5. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2024 թվականին համաշխարհային տնտեսությունում և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական զարգացումները համեմատաբար կայուն են եղել: Տարին հիմնականում բնութագրվել է պետական ու մասնավոր սպառման աճով, գնաճային ճնշումների թուլացմամբ (բացառությամբ ՌԴ-ի), ինչպես նաև դրամավարկային քաղաքականությունների զսպող դիրքի որոշակի թուլացմամբ: Պղնձի միջազգային գինը, որը կարևոր է ՀՀ տնտեսության համար, 2024թ. նախորդ տարվա համեմատ աճել է 7.7%-ով՝ կազմելով 9,142 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց: Պղնձի միջազգային գնի աճը պայմանավորված է եղել խտանյութի առաջարկի կրճատմամբ՝ կապված կարևոր հանքավայրերի շահագործման դադարեցմամբ, ինչպես նաև կանաչ էներգիայի անցման և դրա հետևանքով էներգետիկ ոլորտում առկա պահանջարկի աճով, հատկապես՝ Չինաստանի կողմից:


2024 թվականը ՀՀ-ի համար սկսվել է տնտեսական աճի բարձր տեմպով, որն աստիճանաբար դանդաղել է՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարիների բարձր աճ ապահովող գործոնների, ինչպես նաև 2024թ. սկզբից ոսկու վերաարտահանման ազդեցությունների աստիճանաբար չեզոքացմամբ: Արդյունքում, 2024թ. գրանցվել է համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 5.9% իրական աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների աճով (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ): Տնտեսության մյուս ճյուղերը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին, սակայն փոքր չափով. շինարարությունը՝ 0.9, արդյունաբերությունը՝ 0.5, իսկ գյուղատնտեսությունը 0.1 տոկոսային կետով: Ընդ որում, գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է փոքր աճ՝ 1.5%, 8 տարվա անընդմեջ անկումից հետո:

Տնտեսական աճով պայմանավորված՝ 4.7%-ով աճել է նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 2023թ. 3,189,008 դրամի (8,125 ԱՄՆ դոլար) փոխարեն կազմելով 3,338,443 դրամ (8,501 ԱՄՆ դոլար), իսկ բնակչության թվաքանակի աճը հակազդել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճին:

Հարկ է նշել, սակայն, որ 2024թ. փաստացի տնտեսական աճը էականորեն զիջում է կանխատեսված 7.0% աճին (որը նաև հանդիսանում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված տնտեսական աճի թիրախը): Շեղումը հիմնականում պայմանավորված է կանխատեսվածից ավելի թույլ տնտեսական զարգացումներով, որոնց արդյունքում տնտեսական աճի 2024թ. համար սպասվող ցուցանիշը վերանայվել է 2025թ. բյուջեի մշակման ընթացքում՝ սահմանվելով 5.8%: Արդյունքում, 2024թ. անվանական ՀՆԱ-ն կազմել է 10,127.2

մլրդ դրամ՝ 2024թ. պետական բյուջեով կանխատեսված ցուցանիշից ցածր լինելով 388.9 մլրդ դրամով:

Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ:

Կանխատեսված ցուցանիշը հանդիսանում է 2024թ. պետական բյուջեի հիմքում ընկած կանխատեսումը, իսկ վերանայվածը՝ 2025թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարում 2024թ. սպասումն է:

2024թ. գնանկումային միտումները շարունակաբար մեղմվել են և փոխարինվել թույլ գնաճով՝ պահպանվելով ԿԲ թիրախային միջակայքից ներքև: Գնաճը զգալիորեն ցածր է եղել կանխատեսված ցուցանիշից (12-ամսյան կանխատեսված 4.0%-ի փոխարեն լինելով 1.5%, իսկ միջին գնաճը՝ 3.2%-ի փոխարեն՝ 0.3%)՝ հիմնականում պայմանավորված արտաքին հատվածից գնանկումային ազդեցություններով և փոխարժեքի արժևորմամբ: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն զգալիորեն մեղմել է դրամավարկային պայմանները և քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել 2.25 տոկոսային կետով՝ դեկտեմբերին սահմանելով այն 7.0%-ի մակարդակում:

Արդյունաբերությունը տարեսկզբին ունեցել է բարձր աճի տեմպ, որն աստիճանաբար դանդաղել և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նույնիսկ զգալիորեն նվազել է՝ հիմնականում պայմանավորված ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրության ենթաուղղորտի զարգացումներով (որն էլ հիմնականում ներառել է ոսկերչական իրերի վերաարտահանումը): Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղի աճը (նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ), իսկ «հանքագործական արդյունաբերություն և բացհանքերի շահագործում» ենթաճյուղը նվազել է՝ հակազդելով արդյունաբերության ճյուղի աճին 1.4 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն 2024թ. աճել է 1.9%-ով: Ճյուղին հիմնականում նպաստել է անասնաբուծության աճը (նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ), որն էլ իր հերթին պայմանավորված է եղել սպանդի համար գյուղատնտեսական կենդանու և թռչնի աճով: Բուսաբուծությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը ևս աճել են՝ դրականորեն նպաստելով ընդհանուր ճյուղի աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 0.4, 0.2 և 0.1 տոկոսային կետ):

Շինարարության ճյուղում գրանցված 14.5% աճը պայմանավորված է եղել բնակչության, կազմակերպությունների և պետական բյուջեի (հիմնականում՝ միջազգային վարկերով ֆինանսավորվող) միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 5.9, 5.5 և 3.8 տոկոսային կետ): Կազմակերպությունների և բնակչության միջոցներով ֆինանսավորվող շինարարության աճերը հիմնականում պայմանավորված են բնակարանային շինարարության ծավալների աճով, որին նպաստել է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների դիմաց եկամտային հարկի վերադարձման ծրագիրը:

Ծառայություններն աճել են 10.6%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով (նպաստումը՝ 6 տոկոսային կետ), որն իր հերթին պայմանավորված է եղել բանկերի գործունեության աճով: Ճյուղի աճին զգալի նպաստում են ունեցել նաև «տեղեկատվություն և կապ», ինչպես նաև «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղերի աճերը (նպաստումները՝ համապատասխանաբար 2.4 և 1.1 տոկոսային կետ): «Տեղեկատվություն և կապ» ենթաճյուղի աճն իր հերթին պայմանավորված է եղել հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աճով, իսկ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի աճը՝ վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպման աճով: Տրանսպորտի ենթաճյուղը նվազել է՝ հակազդելով ծառայությունների ճյուղի աճին 1.6 տոկոսային կետով: «Տրանսպորտ» ենթաճյուղի նվազումն իր հերթին պայմանավորված է եղել հիմնականում օդային և ցամաքային տրանսպորտով մատուցված ծառայությունների նվազմամբ:

2024թ. ապրանքների արտահանումն աճել է 53.1%-ով՝ պայմանավորված հիմնականում վերաարտահանման (հատկապես՝ դեպի ԱՄԷ) բարձր ծավալներով: Սակայն մայիս ամսից սկսած արտահանման աճի տեմպերը կտրուկ դանդաղել են՝ հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների կտրուկ կրճատմամբ: Արտահանման աճին ամենամեծ դրական նպաստումն է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (56.4 տոկոսային կետ) ապրանքախումբը (հիմնականում՝ «Ոսկի անմշակ

կամ կիսամշակ, փոշի», «Ոսկերչական իրեր», «Պլատին անմշակ կամ կիսամշակ, փոշի» և «Արծաթ անմշակ կամ կիսամշակ, փոշի» ապրանքախմբերը՝ պայմանավորված վերաարտահանման գործոնով: Արտահանման աճին դրական նպաստում են ունեցել նաև «Հանքահումքային արտադրանք» (1.6 տոկոսային կետով), «Պատրաստի սննդի արտադրանք» (0.7 տոկոսային կետով) և «Բուսական ծագման արտադրանք» (0.6 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Ամենամեծ բացասական նպաստումն ունեցել են՝ «Տրանսպորտային միջոցներ» (5.2 տոկոսային կետով), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (1.1 տոկոսային կետ), «Մեքենաներ և սարքավորումներ» (0.5 տոկոսային կետ) ապրանքախմբերը:

Ներմուծման աճը նույնպես երկնիշ է եղել 2024թ. (33.8%)՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ: 2024թ. մայիս ամսից արձանագրվել է ներմուծման աճի տեմպերի կտրուկ դանդաղում՝ պայմանավորված վերը նշված վերաարտահանման գործոններով: Ներմուծման աճին ամենամեծ նպաստումն են ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (36.4 տոկոսային կետ՝ վերաարտահանմամբ պայմանավորված), «Մեքենաներ և սարքավորումներ» (1.4 տոկոսային կետով), «Պատրաստի սննդի արտադրանք» (0.8 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Էական բացասական նպաստում է ունեցել «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախումբը, որը ներմուծման աճին հակազդել է 6.8 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ. պետական բյուջե, օրենք / ուղերձ	2024թ. Փաստ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.9	6,991.8	8,501.4	9,453.2	10,516.1	10,127.2
ՀՆԱ-ի իրական աճ, %	-7.2	5.8	12.6	8.3	7.0	5.9
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.8	6.9	8.0	2.7	4.0	1.2
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	3.7	7.7	8.3	-0.6	4.0	1.5
Գնաճ (միջին), %	1.2	7.2	8.6	2.0	3.2	0.3
Գործազրկության մակարդակը	18.2	15.5	13.5	12.4	... ¹	13.9
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար ²	4,269	4,685	6,661	8,125	8,602	8,501

¹ Ցուցանիշն առկա չէ:

² Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կանխատեսումներում հաշվարկվել է՝ հիմք ընդունելով տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը:

Հիմնական միջոցներում ներդրումներ / ՀՆԱ, %	17.8	21.2	21.1	20.9	21.9	21.7
Արտահանում / ՀՆԱ, %	30.5	36.3	51.9	59.5	56.4	72.2
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ, %	-4.0	-3.5	0.3	-2.3	-4.8	-3.9
Հարկաբյուջետային ցուցանիշներ (մլրդ դրամ)						
Պետական բյուջեի եկամուտներ	1,574.0	1,706.5	2,099.6	2,410.7	2,723.6	2,579.2
<i>Հարկային եկամուտներ</i>	1,398.5	1,609.6	1,962.5	2,273.9	2,613.6	2,390.9
Պետական բյուջեի ծախսեր	1,908.0	2,027.0	2,279.1	2,599.6	3,206.5	2,955.3
<i>Ընթացիկ ծախսեր</i>	1,681.8	1,810.7	1,898.7	2,127.0	2,511.2	2,413.6
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	226.2	216.3	380.4	472.6	695.3	541.7
Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորում	334.0	320.5	179.5	188.9	482.9	376.1
ՀՀ կառավարության պարտք	3,923.9	4,209.8	3,969.7	4,571.9	5,082.9	4,892.9
Հարկաբյուջետային ցուցանիշները (ՀՆԱ-ի նկատմամբ %)						
Պետական բյուջեի եկամուտներ	25.5	24.4	24.7	25.5	25.9	25.5
<i>Հարկային եկամուտներ</i>	22.6	23.0	23.1	24.1	24.9	23.6
Պետական բյուջեի ծախսեր	30.9	29.0	26.8	27.5	30.5	29.2
<i>Ընթացիկ ծախսեր</i>	27.2	25.9	22.3	22.5	23.9	23.8
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	3.7	3.1	4.5	5.0	6.6	5.3
Պետական բյուջեի պակասուրդ	5.4	4.6	2.1	2.0	4.6	3.7
ՀՀ կառավարության պարտք	63.5	60.2	46.7	48.4	48.3	48.3

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Պետական բյուջեի եկամուտները 2023թ. համեմատ 2024թ. աճել են շուրջ 7.0%-ով՝ հասնելով 2,579.2 մլրդ դրամի: Սակայն, մակրոտնտեսական զարգացումներով պայմանավորված, բյուջեի եկամուտները թերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ շուրջ 4.2%-ով (113.1 մլրդ դրամով), իսկ բյուջեի պլանի նկատմամբ՝ 5.3%-ով (144.4 մլրդ դրամով): Բյուջեի հարկային

Եկամուտները նույնպես թերակատարվել են 7.3%-ով (188.5 մլրդ դրամով)՝ ճշտված պլանի նկատմամբ և 8.5%-ով (222.7 մլրդ դրամով)՝ բյուջեի պլանի նկատմամբ:

Բյուջեի պաշտոնական դրամաշնորհները 2023թ. համեմատ աճել են 2 անգամ (13.6 մլրդ դրամով)՝ բյուջեով նախատեսվածի համեմատ գերակատարվելով 20.0%-ով (իսկ ճշտված պլանի համեմատ 35.9%-ով), որը պայմանավորված է չնախատեսված բյուջետային աջակցության դրամաշնորհների ստացմամբ: Սակայն նպատակային ծրագրերի մասով դրամաշնորհները թերակատարվել են՝ նախատեսված 12.1 մլրդ դրամի դիմաց կազմելով 5.6 մլրդ դրամ:

Ոչ հարկային եկամուտները 2024թ. կազմել են 161.6 մլրդ դրամ և նույնպես գերակատարվել են և՛ բյուջեի պլանի, և՛ ճշտված պլանի համեմատ՝ համապատասխանաբար 84.3%-ով և 73.2%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 30.6%: Ցուցանիշների գերազանցումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների ծրագրային ցուցանիշի գերազանցմամբ: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարության կառավարման ներքո գտնվող պետական մասնակցության դիմաց ստացված 33.3 մլրդ դրամի շահաբաժիններով:


Աղյուսակ 2. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2023թ.		2024թ.			
	Փաստացի	Պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %	Աճը 2023թ. համեմատ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	2,410.7	2,723.6	2,692.3	2,579.2	95.8	7.0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	2,273.9	2,613.6	2,579.4	2,390.9	92.7	5.1
Պաշտոնական դրամաշնորհներ	13.1	22.3	19.7	26.7	135.9	103.7
Այլ եկամուտներ	123.7	87.7	93.3	161.6	173.2	30.6

ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների կշիռը նվազել է՝ 2024թ. կազմելով 23.6%՝ նախորդ տարվա 24.1%-ի դիմաց: Ընդ որում, հարկեր/ՀՆԱ-ի


կանխատեսումը 2024թ. համար կազմում էր 24.9%, որը 2025թ. բյուջեի հիմքում դրված սցենարով վերանայվել էր դեպի ներքև՝ հասնելով 24.3%-ի, սակայն փաստացի ցուցանիշն էականորեն ավելի ցածր է եղել: **2024թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցության նվազումը հիմնականում բացատրվում է տնտեսության կառուցվածքի փոփոխություններով, մասնավորապես այն հանգամանքով, որ 5.9% տնտեսական աճը պարունակում է նաև ոսկու վերաարտահանման ազդեցությունը: Այդ գործունեությունը, սակայն, ՀՀ տնտեսությունում ավելացված արժեք գրեթե չի ստեղծել և չի հարկվել:**

Գծապատկեր 2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան վերջին տարիներին



Հարկային եկամուտների աճը 2024թ. հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 7.2%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ 65.7%), շահութահարկի (աճը՝ 4.4%) և պետական տուրքի (աճը՝ 19.3%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.9, 1.8 և 0.6-ական տոկոսային կետ: ԱԱՀ-ի գծով արձանագրվել է բացասական դինամիկա՝ 1.5% անկում, ինչն ընդհանուր հարկերի աճին հակազդել է 0.5 տոկոսային կետով: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության անկումը նույնպես հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի անկմամբ, որը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է շուրջ 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 3. Հարկային եկամուտների աճին նպաստումները և ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխությունը 2024թ.



3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման

2024թ. պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,955.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.0%-ով, իսկ նախորդ տարվա հետ համադրելի ցուցանիշի (առանց հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների վերադարձված գումարների) աճը կազմում է 13.3%: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 2,413.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.3%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2023թ. նկատմամբ ավելացել է 1.7 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերի կշիռն աճել է 1.3 տոկոսային կետով³:


Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 541.7 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 557.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 12.8%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 0.35

³ ՀՆԱ-ի նկատմամբ կշիռների փոփոխության հաշվարկն իրականացվել է համադրելի ցուցանիշների կիրառմամբ, այսինքն՝ 2024թ. ծախսերի ցուցանիշից հանվել է հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների մասով վերադարձված գումարները:

տոկոսային կետով՝ կազմելով 5.3%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ավելացել են 0.28 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 5.5%-ը:

Բյուջեի ծախսերի կառուցվածքում նվազել են ընթացիկ ծախսերի (առանց կառավարման պարտքի սպասարկման գծով տոկոսավճարների) կշիռը՝ 2023թ. 72.1%-ից 2024թ.-ին դառնալով 71.1%: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռն աճել է շատ փոքր չափով՝ 0.1 տոկոսային կետով, սակայն տոկոսավճարների կշռի աճն էական է եղել՝ շուրջ 0.9 տոկոսային կետով՝ հասնելով 10.6%-ի:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



Ընդհանուր ծախսերի կատարողականը ցածր է եղել 2024-ին՝ կազմելով 93.9% ճշտված պլանի համեմատ: Ցածր կատարողականը պայմանավորված է և՛ ընթացիկ ծախսերի, և՛ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների թերակատարումներով, որոնց չափերը կազմել են համապատասխանաբար 3.7% և 15.8%:

2024թ. կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 84.7%՝ նախորդ տարվա 95.8%-ի համեմատ նվազելով 11.1 տոկոսային կետով, մինչդեռ պետական բյուջեի սկզբնական ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 78.5%: **Կապիտալ ծախսերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի ճշտված ծրագրի նկատմամբ 35.3% կատարողականով:** Հատկանշական է, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 87%, իսկ բյուջեի սկզբնական ծրագրի նկատմամբ կազմել է ընդամենը 63.1%:

Կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական: Միաժամանակ, պետք է նշել, որ կապիտալ ծախսերի կատարումը վերջին տարիներին ուղեկցվում է դրանց պլանավորված ծավալների շարունակական ավելացմամբ:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	2023	2024				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2023թ. նկատմամբ
Ընդամենը ծախսեր	2,547.7	3,206.5	3,148.8	2,955.3	93.9%	16.0%
Ընթացիկ ծախսեր	2,075.1	2,511.2	2,505.2	2,413.6	96.3%	16.3%
Աշխատանքի վարձատրություն	218	240.2	247.2	242.7	98.2%	11.3%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	191.1	191.7	128.1	108.7	84.9%	-43.1%
Տոկոսավճարներ	253.4	323.1	345	313.6	90.9%	23.8%
Սուբսիդիաներ	164	184.9	189.2	187.7	99.2%	14.5%
Դրամաշնորհներ	281	294.0	310.6	303.4	97.7%	8.0%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	710.2	878.4	1,051.70	1,026.20	97.6%	44.5%
Այլ ծախսեր	257.2	398.8	233.5	231.3	99.1%	-10.1%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	472.6	695.3	643.6	541.7	84.2%	14.6%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	494.4	710.3	658.6	557.8	84.7%	12.8%
<i>Հիմնական միջոցներ</i>	<i>494.2</i>	<i>710.3</i>	<i>658.5</i>	<i>557.7</i>	<i>84.7%</i>	<i>12.8%</i>
Շենքեր և շինություններ	446.6	635.7	581.4	506.3	87.1%	13.4%

Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	39.2	47.4	63.9	43.8	68.5%	11.7%
Այլ հիմնական միջոցներ	8.4	27.2	13.2	7.6	57.6%	-9.5%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-21.8	-15.0	-15.0	-16.1	107.3%	-26.1%

Ընթացիկ ծախսերի ցածր կատարողականը հիմնականում բացատրվում է տոկոսավճարների, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի թերակատարումներով:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի թերակատարումը և նախորդ տարվա համեմատ 43.1% (82.4 մլրդ դրամ) նվազումը հիմնականում պայմանավորված է 2024թ. հունվարից պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը մատուցվող բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների ֆինանսավորման նոր մեխանիզմի՝ օֆերտայի (չսահմանափակված բյուջեի) ներդրմամբ, որի հետ կապված՝ նշված ծառայությունների ֆինանսավորումն իրականացվում է նպաստների տրամադրման եղանակով՝ նախկինում գործող ծառայությունների և ապրանքների ձեռքբերման փոխարեն: Այս գործոնով է բացատրվում նաև սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով գրանցված բարձր աճը:


Պարտքի սպասարկման գծով առկա թերակատարումը պայմանավորված է տոկոսավճարների գծով խնայողությամբ, որի պատճառը կանխատեսվածից ավելի բարենպաստ փոխարժեքի ձևավորումն է:

3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման

Բյուջեի ծախսերի գերակշիռ մասը 2024թ. ուղղվել է սոցիալական ապահովությանը, հանրային ծառայություններին (այդ թվում՝ պարտքի սպասարկմանը) և պաշտպանությանը, որոնք կազմել են բյուջեի ծախսերի շուրջ 70.1%-ը: Նշված երեք ուղղություններով ծախսերի կշիռն աճել է նախորդ տարվա համեմատ շուրջ 1.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական ապահովության ու հանրային ծառայություններին ուղղվող ծախսերի կշռի աճով, իսկ պաշտպանությանն ուղղվող ծախսերի կշիռը նվազել է 2.1 տոկոսային կետով: Նվազել է նաև տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը՝ 7.8%-ից դառնալով 6.9%: Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշռի 2.2% աճը հիմնականում պայմանավորված է 2024թ. ծախսերում հիպոթեքային վարկերի վճարված

տոկոսների վերադարձված գումարների արտացոլմամբ: Նշվածը հաշվի չառնելու դեպքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշռի աճը կկազմի 0.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման



«Կ պետական բյուջեի ծախսերի 93.9% կատարողականը հիմնականում պայմանավորված է կրթության, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և սոցիալական ապահովության ոլորտների ծախսերի կատարողականով: Կրթության ոլորտի ծախսերը 2024թ. կազմել են 231 մլրդ դրամ և ապահովել 78.6% կատարողական: Շեղումը հիմնականում արձանագրվել է հիմնական ընդհանուր կրթության դասի ծախսերում, որոնք կատարվել են 62.6%-ով՝ կազմելով 84.5 մլրդ դրամ, որը պայմանավորված է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի ցածր կատարողականով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բաժնի ծախսերը կազմել են 671.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 92.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով խնայողություններով:

Սոցիալական ապահովության ոլորտի ծախսերը 2024թ. կազմել են 851.9 մլրդ դրամ և ապահովել 97.1% կատարողական: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Ծերություն», «Ընտանիքի անդամներ և զավակներ» և «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերի չպատկանող)» դասերում: Մասնավորապես՝ ծերության դասի ծախսերը կատարվել

են 98.5% ով՝ կազմելով 580.2 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատանքային կենսաթոշակներին հատկացված միջոցների տնտեսմամբ: «Ընտանիքի անդամներ և զավակներ» դասի ծախսերը կազմել են 112.4 մլրդ դրամ՝ ապահովելով 94.2% կատարողական: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն և «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրերում: Իսկ սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ դասի 94.9% կատարողականը (122.7 մլրդ դրամ) հիմնականում պայմանավորված է «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» և «Սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրերի կատարողականով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, մլրդ դրամ

	2023		2024			
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2023թ. համեմատ, %
Ընդամենը ծախսեր	2,547.6	3,206.5	3,148.8	2,955.3	93.9%	16.0%
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	522.5	678.9	724.1	671.3	92.7%	28.5%
Պաշտպանություն	525.9	557.0	553.4	549.0	99.2%	4.4%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	207.6	223.5	236.9	227.8	96.2%	9.8%
Տնտեսական հարաբերություններ	199.2	266.0	217.3	203.7	93.7%	2.3%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	7.7	11.0	13.4	10.7	80.2%	39.4%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	10.9	19.0	18.5	14.5	78.4%	33.3%
Առողջապահություն	141.3	169.9	169.5	154.8	91.4%	9.6%
Հանգիստ, մշակույթ և կրոն	43.3	40.2	44.2	40.5	91.5%	-6.4%
Կրթություն	183.6	290.7	293.9	231.0	78.6%	25.8%

Սոցիալական պաշտպանություն	705.8	794.5	877.7	851.9	97.1%	20.7%
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	0.0	155.9	0.0	0.0	-	-

3.3. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման

«ՀՀ 2024թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 168 ծրագրի իրականացում 47 պետական մարմինների և կառավարության պատասխանատվության ներքո: Կառավարության կատարած ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 171, որից փաստացի միջոցներ են օգտագործվել 168-ի գծով, իսկ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 984 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 950-ը կամ 96.5%-ը: Այսինքն՝ 34 ծրագիր ընդհանրապես չի արվել, իսկ առանձին ծրագրեր և միջոցառումներ ունեցել են բավական մեծ թերակատարումներ: Մասնավորապես՝

ԿԳՄՄՆ-ի կողմից իրականացվող «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում ճշտված պլանով հատկացված 85.0 մլրդ դրամ ռեսուրսից ծախսվել է ընդամենը 30 մլրդ դրամը, ինչպես արդեն նշել ենք 3.1 բաժնում՝ ապահովելով ծրագրի ընդամենը 35.3% կատարողական:

«Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ֆինանսավորել պետական մարմինների կողմից իրականացվող թվային փոխակերպման միջոցառումները, որի գծով հատկացված 10 մլրդ դրամից ծախսվել է ընդամենը 430.7 մլն դրամը: Ծրագրին հատկացված գումարը տարվա ընթացքում ճշտվել է դեպի ներքև՝ կազմելով 2.6 մլրդ դրամ, սակայն ճշտված պլանի նկատմամբ կատարողականը եղել է 16.3%:

Փոքր և միջին ջրամբարների կառուցում միջոցառման ուղղությամբ հատկացված 2 մլրդ դրամ միջոցներից ծախսվել է ընդամենը 305.4 մլն դրամը: Այս միջոցառման գծով պլանը վերանայվել է՝ տարվա ընթացքում ճշտված պլանով սահմանվելով 562.5 մլն դրամ, որը, սակայն, նույնպես թերակատարվել է:

Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար միջոցառումը թերակատարվել է 81.2%-ով՝ նախատեսված 1.5 մլրդ դրամի փոխարեն ծախսվել է 288.2 մլն դրամ գումար:

Էականորեն թերակատարվել է նաև «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում» միջոցառումը, որի գծով նախատեսվել էր շուրջ 59.0 մլն դրամ, սակայն փաստացի իրականացվել է միայն 6.8 մլն դրամի ծախս կամ նախատեսվածի 11.5%-ը: Իսկ «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում» միջոցառումը թերակատարվել է 52.7%-ով (նախատեսվել է 402.9 մլն դրամ, ծախսվել է 190.4 մլն դրամը):

Վերոհիշյալ ծրագրերը և միջոցառումները օրինակներ են, որոնք ցույց են տալիս, որ բյուջեի ծախսերը շարունակվում են իրականացվել անկանոն եղանակով, այսինքն՝ պլանավորվածից էականորեն շեղվելով: Դրա պատճառները շատ են՝ սկսած պլանավորման խնդիրներից մինչև ծրագրերի իրականացման կարողության պակաս, որը նկատվում է թե՛ պետական մարմիններում՝ ծրագրի մշակման և դրա իրականացումը կազմակերպելու մասով, թե՛ մասնավոր հատվածում ծրագրերի իրականացման համար համապատասխան կարողություններ ունենալու մասով: Սակայն մտահոգիչն այն է, որ տարիների ընթացքում իրավիճակը չի բարելավվում և բյուջետային ռեսուրսների օգտագործումը շարունակում է շեղվել նախապես պլանավորված ուղղություններից:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2024 թվականին տնտեսական զարգացումները եղել են սպասվածից ավելի ցածր մակարդակում (հատկապես տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մասով), սակայն բյուջեի պակասուրդը եղել է պլանավորվածից ավելի փոքր՝ 482.9 մլրդ դրամի փոխարեն կազմելով 376.1 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ պակասուրդի մակարդակն էականորեն մեծացել է՝ հասնելով ՀՆԱ-ի 3.7%-ին՝ նախորդ տարվա 2.0%-ի դիմաց:

Պակասուրդի ֆինանսավորումը ևս էականորեն շեղվել է պլանավորվածից: Այսպես՝ ներքին աղբյուրներից ներգրավվող ռեսուրսները կազմել են 359.1 մլրդ դրամ՝ շուրջ 7.9 մլրդ դրամով գերազանցելով պլանավորված մակարդակը, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավվող ռեսուրսների մակարդակը կազմել է 17.0 մլրդ դրամի չափ՝ պլանավորված 131.7-ի փոխարեն: Վերջինս հիմնականում

պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարման և դրա հետ կապված ֆինանսավորման ստացման դժվարությունների հետ:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը


	2023	2024		
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.
Մլրդ դրամ				
Բյուջեի պակասուրդ	188.9	482.9	456.5	376.1
Ներքին աղբյուրներ	412.3	351.2	401.4	359.1
Փոխառու զուտ միջոցներ	360.3	350.8	366.0	369.0
Ֆինանսական զուտ ակտիվներ	52.1	0.4	35.4	(9.9)
Արտաքին աղբյուրներ	(223.5)	131.7	55.1	17.0
Փոխառու զուտ միջոցներ	(73.3)	140.0	62.7	30.9
Ֆինանսական զուտ ակտիվներ	(150.2)	(8.2)	(7.7)	(13.9)
% ՀՆԱ-ում				
Բյուջեի պակասուրդ	2.0%	4.6%	-	3.7%
Ներքին աղբյուրներ	4.3%	3.3%	-	3.5%
Փոխառու զուտ միջոցներ	3.8%	3.3%	-	3.6%
Ֆինանսական զուտ ակտիվներ	0.5%	0.0%	-	-0.1%
Արտաքին աղբյուրներ	-2.4%	1.3%	-	0.2%
Փոխառու զուտ միջոցներ	-0.8%	1.3%	-	0.3%
Ֆինանսական զուտ ակտիվներ	-1.6%	-0.1%	-	-0.1%

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,092.7 մլրդ դրամ (12.8 մլրդ ԱՄՆ դոլար, որից 6.4 մլրդ ԱՄՆ դոլարը կազմել է արտաքին պարտքը, 6.4 մլրդ ԱՄՆ դոլարը՝ ներքին պարտքը): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշների աճը նախորդ տարեվերջի համեմատությամբ կազմել է համապատասխանաբար՝ 6.2% և 8.4%՝ պայմանավորված ՀՀ կառավարության պարտքի աճով: 2024թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) հասել է 12.3 մլրդ ԱՄՆ դոլարի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.2%-ով: Ընդ որում, պարտքի աճը պայմանավորված է եղել ներքին պարտքի (դրամային արտահայտությամբ) 17.1% աճով, իսկ արտաքին պարտքի ծավալը չի փոխվել:

Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ պակասուրդի էական աճի պայմաններում, պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է՝ հիմնականում պայմանավորված տնտեսական աճով և փոխարժեքի արժևորմամբ:

Կառավարության պարտք/ՀՆԱ-ն 2024թ. կազմել է 48.3%՝ նախորդ տարվա 48.4%-ի համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պակասուրդի և պարտքի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

5. ԱՄՓՈՓՈՒՄ

- **2024 թվականին արտաքին աշխարհի զարգացումները հարաբերականորեն կայուն են եղել, իսկ ՀՀ տնտեսությունում նկատվել է տնտեսական աճի տեմպերի դանդաղում՝** նախորդ տարիների բարձր աճ ապահովող գործոնների չեզոքացման պայմաններում: Գրանցվել է շուրջ 5.9% տնտեսական աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և առևտրի աճերով: Տարեսկզբին նկատվել է ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների էական աճ, որն աստիճանաբար չեզոքացել է: Սակայն վերջինս որոշակիորեն ներառվել է 5.9% աճի մեջ, թեև այդ մասով ՀՀ տնտեսությունում ավելացված արժեք գրեթե չի ստեղծվել:

- **Պետական բյուջեի փաստացի ցուցանիշներն էականորեն շեղվել են բյուջեի հիմքում դրված 2024թ. համար կանխատեսումներից:** Այսպես՝ տնտեսական աճը կանխատեսված (թիրախավորված) 7%-ի փոխարեն կազմել է 5.9%, հարկեր/ՀՆԱ-ն 24.9%-ի փոխարեն կազմել է 23.6%, իսկ միջին գնաճը 3.2%-ի փոխարեն կազմել է 0.3%: Այս ամենի արդյունքում հարկային եկամուտները հավաքագրվել են պլանավորվածից 222.7 մլրդ դրամ պակաս չափով: Սա, իհարկե, էական մարտահրավեր է բյուջեի համար, սակայն նշենք, որ ծախսերի թերակատարման պայմաններում հարկաբյուջետային կայունության տեսանկյունից ստեղծված վտանգները որոշակիորեն մեղմվել են:

- **Ծախսերի կատարողականը վատթարացել է նախորդ տարվա համեմատ:** Ընդհանուր ծախսերի կատարողականը կազմել է 93.9%՝ նախորդ տարվա 97.1% կատարողականի դիմաց: Ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարողականը ևս վատթարացել է՝ հատկապես էական է կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) կատարողականի անկումը՝ նախորդ տարվա 95.8%-ի դիմաց կազմելով 84.7%: **Կապիտալ ծախսերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի ճշտված ծրագրի նկատմամբ 35.3% կատարողականով:** Տնտեսական ակտիվության աճի դանդաղման պայմաններում հատկապես կապիտալ ծախսերի թերակատարումը առավել նշանակալի բացասական ազդեցություն է ունենում տնտեսության երկարաժամկետ զարգացման տեսանկյունից:

- **Բյուջեի կատարման հետ կապված խնդիրները չեն սահմանափակվում միայն ընդհանուր ծախսերի թերակատարումներով:** Մտահոգիչ են նաև ծրագրային մակարդակում ծախսերի կատարողականները, որոնք ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ մի շարք կարևոր և սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ծրագրերի գծով առկա են էական (որոշ դեպքերում նաև 50%-ը գերազանցող) թերակատարումներ: **Պետական ռեսուրսի բաշխումն էականորեն շեղվում է պլանավորվածից, քանի որ մի շարք ծրագրերի գծով առկա թերակատարումների պայմաններում գումարներն ուղղվում են այլ ծրագրերի: Վերջինս, իհարկե, նվազեցնում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը:**

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**